

հաստատէ նաեւ ուրիշ ժամանակակից մը՝ Գրիգոր Դարանազցին, որ 1634ի ծնագատիկը կը պատմէ պատահած յառաջին ամի «տեառն Փիլիպպոսի նորընծայ կաթողիկոսի, աշա-
կերտին Մօսէսի համանման առաքինոյն իւրոյ տեսականաւն եւ գործնականաւն, որ յետ փոխման նորա սա յաջորդեաց նորին հրամա-
նաւն՝ մինչդեռ ի կենդանին էր ի ժամ վաղ-
նանին» (էջ 235): Այսպէս նաեւ Սիմէոն Երեւանցի (Ջամբո, էջ 78—79) կը յայտնէ
թէ Փիլիպպոս ՌԶԳ թուին «յետ վախճան-
ման տեառն Մօսիսին յորժամ ընտրեցաւ ...
զրէ զզիրս սիրոյ առ Աղուանս, ընդ նմին եւ
ծանուցանէ նոցա զմահ տեառն Մօսիսին եւ
զընտրիլն իւր»:

Հիմնուած այս վկայութիւններու վրայ,
կրնանք վստահարար հաստատել թէ Փիլիպ-
պոս 1633 Մայիս 21ին ընտրուեցաւ յաջորդ
Մովսիսի, իսկ 1634 Յունուար 13ին օծուեցաւ
կաթողիկոս: Բայց կ'ըսուի ²⁰ թէ Փիլիպպոսի
կնիքին վրայ կը կարդացուի իբրեւ ընտրու-
թեան թուական 1633. ինձ ծանօթ կնիքը, զոր
նմանահանութեամբ հրատարակած է Աղա-
նեանց ²¹, չատ անորոշ ներկայացուցած է
թուականը:

Կ'երեւայ թէ Փիլիպպոսի ընտրութեան
յուրը դեռ չէր հռչակուած ի Լահօր, երբ

²⁰ Թովհեան, Յուլի 3-րդ հրատարակած Դաղեան խա-
չիկ վարդապետի. Բ., էջ 3. «Տէր Փիլիպպոս ԿԱ-
ԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ. Հ. Թ. ՌԶԲ»:

²¹ Դիւան Հայոց պատմութեան. Գիրք Ժ. Թիֆլիս
1912: